# Հայաստանի Հանրապետություն

## Լոռու մարզ

## Լեռնանցքի համայնքապետարան

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ.
գ. Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

№ԼՄ/Լ Հ025/ 52

«01» 03 2018 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավարի թիվ 06 և ավագանու թիվ 08-Ա, 09-Ն, 10, 11-Ա որոշումները:

Առդիր 11 թերթ:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնանցք համայնք, հասցե 8 փ. Շենք թիվ 6/4.

Հեռախոս՝ 093 - 32 - 22 - 39
Էլ.Փոստ՝ lernancq.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ ԹԻՎ 06

«27» 02 2018թ.

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան և հիմք ընդունելով Լեռնանցք համայնքի բնակիչներից ստացված դիմումները.

Որոշում եմ՝

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեի 4729 և 4726 հոդվածներից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի
ղեկավարի 27.02.2018թ. թիվ 06 որոշման

1. Խաչատրյան Անի Լևոնի - /երեխայի ծննդյան/ - 20000 (քսան հազար) դրամ:

2. Օհանյան Լիլիթ Բեյագինի - /հարազատին կորցրած/ - 30000 (երեսուն հազար) դրամ:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«26» 02 2018թ. հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 08-Ա

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու 2018թ. փետրվարի 26-ի նիստի օրակարգը.

## ՕՐԱԿԱՐԳ

Լեռնանցք համայնքի ավագանու 2018թ-ի փետրվարի 26-ի նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 23-ի թիվ 03 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Լեռնանցք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Մանուկյան Է. | [signature] | | |
| Չախոյան Ա. | [signature] | | |
| Վարդանյան Ս. | [signature] | | |
| Վիրաբյան Կ. | [signature] | | |
| Օհանյան Յ. | [signature] | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ [signature] Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

« 26 » 02 2018 թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 09-Ն

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնանցք համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզարյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք
համայնքի ավագանու 26.02.2018թ.
թիվ 09-Ն որոշման

# I. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում Լեռնանցքի համայնքապետարանի սեփական եկամուտները կատարվել է 108%-ով:

2017թ-ին համայնքի եկամուտները հիմնականում ձևավորվել են՝

| Հ/Հ | Եկամուտներ | Նախատեսված հազ. դրամ | Փաստացի հազ. դրամ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Գույքահարկ | 1932.7 | 2232,0 | 115% |
| 2. | Հողի հարկ | 1558.4 | 1581,4 | 101%. |
| 3. | Հողի վարձավճար | 340.6 | 341,3 | 100.2% |
| 4. | Տեղական տուրքեր և վճարներ | 42,0 | 42,0 | 100% |
| 5. | Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ | 27656,0 | 27656,0 | 100% |

Համայնքապետարանի կողմից կատարված ծախսերն ըստ խմբերի՝

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ– 31.505.700 դրամ, որն իր մեջ ներառում է 16.581.100 դրամ աշխատավարձ և վրաեկ, իսկ մնացած 14.924.600 դրամը ծախսվել է՝

| Հ/Հ | Ծախսեր | Հոդվածի համարը | Նախատեսված հազ. դրամ | Փաստացի հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| 6. | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 1464,0 | 1463,8 |
| 7. | Կոմունալ ծառայություններ | 4213 | 840,0 | 840,0 |
| 8. | Կապի ծառայություններ | 4214 | 275,0 | 275,0 |
| 9. | Ապահովագրական ծախսեր | 4215 | 70,0 | 67,0 |
| 10. | Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 680,0 | 492,0 |
| 11. | Ներքին գործուղումներ | 4221 | 150,0 | 78,0 |
| 12. | Համակարգչային ծառայություններ | 4232 | 206,0 | 205,6 |
| 13. | Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 40,0 | 18,4 |
| 14. | Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 250,0 | 150,0 |
| 15. | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4238 | 180,0 | 180,0 |
| 16. | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 655,0 | 645,0 |
| 17. | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում | 4251 | 150,0 | 130,0 |
| 18. | Մեքենաների և սարքավորումների | 4252 | 250,0 | 242,0 |
| 19. | Գրասենյակային նյութեր | 4261 | 400,0 | 343,2 |
| 20. | Տրանսպորտային նյութեր- (մարդատար ավտոբուս) | 4264 | 2200,0 | 2197,5 |
| 21. | Առողջապահական և լաբորատոր | 4266 | 100,0 | 100,0 |
| 22. | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 2050,0 | 1825,1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23. | Ընթացիկ դրամաշնորհներ պետական և | 4637 | 200,0 | 200,0 |
| 24. | Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 4639 | 293,0 | 293,0 |
| 25. | Հողարկավորության նպաստներ բյուջ. | 4726 | 420,0 | 420,0 |
| 26. | Այլ նպաստներ բյուջեից՝ որից | 4729 | 1740,0 | 1740,0 |
| | Երեխայի ծննդյան | | 380,0 | 380,0 |
| | Դպրոցականներին | | 250,0 | 250,0 |
| | Հաշմանդամներ, միայնակ թոշակառուներ և սոց. անապահով ընտանիքներին | | 1110,0 | 1110,0 |
| 27. | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապ. | 4819 | 220,0 | 95,0 |
| 28. | Պարտադիր վճարներ | 4823 | 203,0 | 203,0 |
| 29. | Շենքերի և շինությունների շինարարութ. | 5112 | 3454,7 | 989,1 |
| 30. | Շենքերի և շինությունների կապիտալ վեր. | 5113 | 1000,0 | 990,1 |
| 31. | Վարչական սարքավորումներ | 5122 | 750,0 | 661,0 |

## II. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2017-2021 թվականների հնգամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված և 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքներ՝

| Հ/Հ | Կատարված աշխատանքներ | Ծախսեր հազ. դրամ | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|
| 1. | Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում (փոսալցման աշխատանքներ) | 990,924 | Համայնքի բյուջե |
| 2. | Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների պահպանման աշխատանքներ | 150,0 | Համայնքի բյուջե |
| 3. | Համայնքի խմելու ջրի համակարգի բարելավում | 1201,0 | Համայնքի բյուջե |
| 4. | Փողոցային լուսավորության ընդլայնման և ընթացիկ նորոգման աշխատանքներ | 1275,256 | Համայնքի բյուջե |

Համայնքում ընդլայնվել է գազաֆիկացման համակարգը՝ 350 գծմ (ազգաբնակչության ծախսերով):

Համայնքապետարանը ակտիվ ներգործություն է ունեցել գյուղատնտեսության ոլորտում՝ պարարտանյութ և բարձրորակ սերմեր մատչելի գներով ձեռք բերելու ուղղությամբ:

Լեռնանցք համայնքի 2017 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված, բայց չիրականացված ծրագրերը տեղափոխվել են համայնքի 2018 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստան 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093-32-22-39
E-mail: lernancq@mail.ru

« 26 » 02 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 03 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 76-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Լեռնանցք համայնքի 2018 թվականի հունվարի 23-ի <<Լեռնանցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն՝ 25 տարի ժամկետով համաձայնություն տալու մասին>> թիվ 03 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 3-րդ կետը հաստատել նոր խմբագրությամբ:

2. Հողամասերի մեկնարկային վարձավճար սահմանել հողամասերի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտի 20%-ի չափով, մեկ քայլի արժեքը սահմանել հողամասերի մեկնարկային գնի՝ 10%-ի չափով:

3. Մրցույթի կազմակերպման հետ կապված ՏԻՄ ծախսերը փոխհատուցելու համար մասնակցության վճարը՝ մրցույթին մասնակցության մեկ հայտի հաշվարկով, սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցքի համայնքի ղեկավար՝ Լ. Արքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«26» 02 2018թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ.
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11- Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու
2018 թվականի փետրվարի 26-ի N 11-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Բաղալյան Գերասիմ Ջ. — 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
2. Մելքոնյան Ալվարդ Խ. — 25000 (քսան հինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
3. Առաքելյան Ռոզա Խ. — 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Վարդանյան